



**ՀԱՄԱ-Յ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ընդհանուր կանոնագրութիւնը մշակուեցաւ 1992-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին որոշումով:

Հետագային, կանոնագրութիւնը բարեփոխումներու ենթարկուեցաւ 2013-ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ եւ 2019-ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի ԺԲ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Կազմակերպական

Բ. Օրէնքներ

Գ. Թեքնիք հարցեր եւ բողոքներ

Դ. Կարգապահական

Ե. Նիւթական

Չ. Յարաբերական

Է. Մրցանակներ

Թ. Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի տասնաբանեան

Ժ. Բարոյագիտական օրէնքներ՝ մարզիկներ, մարզիչներ, համակիրներ

## Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

1. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը տեղի կ'ունենան չորս տարին անգամ մը:
2. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը կը կազմակերպուին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ: Խաղերուն կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջանները՝ համաձայն մրցաշարքի օրէնքներուն:
3. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու համար Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը նշանակէ Կազմակերպիչ Յանձնախումբ, որ խաղերու գործադիր բարձրագոյն մարմինն է:
4. Կազմակերպիչ Յանձնախումբը կը բաղկանայ 7, 9 կամ 11 անդամներէ, որոնք կը վարեն հետեւեալ պաշտօնները. - ատենապետ, ատենադպիր, հաշուապահ, դաստիարակչական պատասխանատու, քարոզչական, ընկերային ցանցերու պատասխանատու եւ այլն:
5. Մարզախաղերու Կազմակերպիչ Յանձնախումբի ժողովներուն եւ հանդիպումներուն ի պաշտօնէ կը մասնակցի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:
6. Մարզախաղերու Կազմակերպիչ Յանձնախումբը կը յառաջացնէ իւրաքանչիւր մարզածեւի յատուկ թեքնիք յանձնախումբ՝ բաղկացած երեք անդամէ:
7. Մարզածեւի մը թեքնիք յանձնախումբը կը կազմակերպէ եւ կը հսկէ տուեալ մարզածեւի բոլոր մրցումները:
8. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն մասնակցող մարզիկները, մարզիչները եւ պատասխանատուները պարտին գիտնալ եւ կիրարկել Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին **տասնաբանեան** եւ **բարոյագիտական օրէնքները**:

## Բ. ՕՐԵՆՔՆԵՐ

1. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն յայտագիրը կը պատրաստէ մրցումները ղեկավարելու պարտականութիւնը ունեցող յանձնախումբը:
2. Մարզախաղերուն յայտագիրը կը պատրաստուի վիճակաձգութեամբ, ի ներկայութեան շրջաններու ներկայացուցիչներու մեծամասնութեան կամ այլ ձեւի մը շուրջ՝ ներկայացուցիչներու համախոհական կարգադրութեամբ:
3. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու յայտագիրին կազմութեան պահուն Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին ներկայութիւնը պայման է:

4. Մարզախաղի մրցաշարք մը կարելի է կազմակերպել գտումի կամ կետերու դրութեամբ, ըստ ժամանակի յարմարութեան, նախապէս տեղեակ պահելով խումբերու պատասխանատուները:
5. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերու մրցումները կը ղեկավարուին ըստ միջազգային օրէնքներու կամ անոնց բարեփոխուած ու յարմարեցուցած ձեւով: Այդ օրէնքները ամենէն ուշը մարզախաղերու թուականէն երեք ամիս առաջ պէտք է մասնակցող շրջաններու վարչութիւններուն եւ խումբերուն փոխանցուին **ամբողջական** եւ **գրաւոր** կերպով:
6. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերու վայրը եւ թուականը կը ճշդէ Կեդրոնական Վարչութիւնը, եթէ որոշուած չէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ:
7. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերուն կրնան մասնակցիլ միայն Հ.Ս.Ը.Ս.ական խումբեր: Ուղեկից Միութիւններ մարզախաղերուն կրնան մասնակցիլ յատուկ հրաւերով:
8. Մարզախաղերուն կրնան մասնակցիլ խաղերու թուականէն նուազագոյնը տարի մը առաջ միութեան անդամակցած Հ.Ս.Ը.Ս.ական մարզիկներ: Արհեստավարժ մարզիկ մը Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերուն չի կրնար մասնակցիլ իր մարզախաղին մէջ:
9. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերուն իւրաքանչիւր մարզիկ կը մասնակցի իր առողջութեան եւ ապահովութեան **անձնական պատասխանատուութեամբ**: Իւրաքանչիւր մարզիկ պարտի այս ուղղութեամբ յատուկ համաձայնագիր մը ստորագրած ըլլալ իր Շրջանի վարչութեան հետ:
10. Իւրաքանչիւր մարզիկ պարտի Կեդրոնական Վարչութեան կամ կազմակերպիչ մարմնին պատրաստած դիմումագիրները ամբողջացնել, ստորագրել եւ Կեդրոնական Վարչութեան վերադարձնել: Եթէ մարզիկը 18 տարիքը չէ ամբողջացուցած՝ դիմումագիրը պարտի ամբողջացնել ձևողքը:
11. Մարզախաղերու մասնակիցներուն անուանացանկը պաշտօնապէս պէտք է վաւերացուած ըլլայ մասնակցող շրջանի Շրջանային կամ Մեկուսի վարչութեան կողմէ:
12. Անուանացանկին մէջ չգտնուող մարզիկներ չեն կրնար մասնակցիլ մրցումներուն. հակառակ պարագային օրինազանց խումբը պարտուած կը հռչակուի մէկ մրցումի համար:

13. Անուանացանկին վրայ յաւելում կամ փոփոխութիւն պէտք է առաջարկուի նախքան խումբին առաջին խաղը:
14. Մրցումի մը չներկայացող խումբը, ի բացակայութեան, մրցումին պարտուած կը հռչակուի: Կրկնութեան պարագային՝ խումբը մրցաշարքէն դուրս կը դրուի:
15. Խումբ մը եթէ մրցումի մը ճշդուած ժամէն 15 վայրկեան ուշ դաշտ ներկայանայ պարտուած կը հռչակուի: Խումբին կամքէն անկախ, արտակարգ պատճառներով ուշացումներու պարագային կազմակերպիչ յանձնախումբը կրնայ երկարածգել մրցումին ժամը:
16. Կազմակերպիչ յանձնախումբը իրաւասութիւնը ունի ստուգելու համա-Յ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մասնակից բոլոր մարզիկներուն փաստաթուղթերը:
- Ոչ-հայ մարզիկները չեն կրնար մասնակցիլ համա-Յ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու: Մասնակցութեան հաստատման պարագային, խումբ մը կը հռչակուի պարտուած, նոյնիսկ եթէ ան մրցումը յաղթէ: Նոյն յանցանքը կրկնուելու պարագային՝ խումբը կը կախակայուի մարզախաղերէն:
17. Մարզախաղերը կը ղեկավարուին միջազգային կամ ազգային ֆետերասիոններէ վկայուած իրաւարարներով:
18. Մրցումներու ընթացքին նկատողութիւններ եւ պատիժներ կը տնօրինուին դաշտի եւ մրցումի իրաւարարներուն կողմէ:
19. Դաշտի պատասխանատու անձը կը հսկէ օրէնքներու կիրարկման եւ խումբերու համերաշխութեան՝ Յ.Մ.Ը.Մ.ի բարոյական արժէքները եւ սկզբունքները յիշեցնելով ու գործադրելով բոլորին:
20. Մարզախաղերու մասնակցող խումբերու մարզիկներուն թուական պատկերը հետեւեալն է.-
- ա. Ֆութպոլ- 15-22 մարզիկ. 1-2 մարզիչ. 1 պատասխանատու:
  - բ. Պասքէթ- 10-14 մարզիկ. 1-2 մարզիչ. 1 պատասխանատու:
  - գ. Վոլիպոլ- 10-12 մարզիկ 1-2 մարզիչ 1 պատասխանատու
  - դ. Փինկ-փոնկ- Խմբային դասաւորման պարագային՝ 3-5 մարզիկ. 1 մարզիչ. 1 պատասխանատու:
  - ե. Ֆութսալ- 8-12 մարզիկ. 1-2 մարզիչ. 1 պատասխանատու:
  - զ. Աթլէթ եւ լող- Անհատական դասաւորման պարագային՝ ազատ:
  - է. Թենիս.- Անհատական դասաւորման պարագային՝ ազատ:
  - ը. Ճատրակ.- Անհատական դասաւորման պարագային՝ ազատ:

21. Բացման եւ փակման հանդիսութիւններուն պատուիրակութեան մը բոլոր անդամներուն մասնակցութիւնը պարտաւորիչ է:
22. Խումբերը դաշտ պէտք է ներկայանան կոկիկ եւ միօրինակ տարազներով:
23. Հ.Մ.Ը.Մ.ի զինանշանը պէտք է կրել շապիկի ձախ կուրծքին վրայ:
24. Խումբերը պէտք է ունենան տարբեր գոյնի գոյգ տարազներ (Նախընտրաբար բաց եւ գոց գոյներով)՝ երկու կողմերու միեւնոյն գոյները կրելու անյարմարութիւնը կանխելու համար:
25. Իրենց կրելիք տարազին գոյնը խումբերուն կը փոխանցուի Նախքան դաշտ ներկայանալը:
26. Պատուիրակութիւնները պարտին ունենալ իրենց պատկանած երկրի դրօշակէն երեքական օրինակ՝ 180x120 սմ. ծաւալով:
27. Պատուիրակութիւնները եւ իրենց խումբերը պարտին Նախատեսուած բոլոր ծրագիրներուն մասնակցիլ ամբողջական կազմով (տողանցք, պաշտօնական այցելութիւններ, պտոյտ, ընթրիք եւ որեւէ այլ յայտագիր):
28. Բանաւոր բացակայութեան պարագային, պատուիրակութեան պատասխանատուն **Նախապէս, գրաւոր** արտօնութիւն պէտք է խնդրէ Կազմակերպիչ Յանձնախումբէն, որուն կը մնայ բացակայութեան պարագան ընդունիլ կամ մերժել:

### **Գ. ԹԵՔՆԻՔ ՅԱՐՑԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ**

Մարզածելի մը թեքնիք յանձնախումբը կը կազմակերպէ եւ կը հսկէ տուեալ մարզածելի բոլոր մրցումները եւ ուղղութիւն կու տայ մրցաշարքի մը ընթացքին ստեղծուող հարցերուն:

1. Թեքնիք յանձնախումբը կը բաղկանայ առաւելագոյնը երեք անդամէ՝ իւրաքանչիւր մարզախաղի համար եւ ներկայութիւն կ'ապահովէ խաղերու ամբողջ տեւողութեան:
2. Թեքնիք յանձնախումբը իր կարելոր դերը ունի մրցաշարքի մը յայտագիրի կազմութեան մէջ:
3. Թեքնիք յանձնախումբը կը կատարէ մրցաշարքի մը իրաւարարներուն ընտրութիւնը:
4. Թեքնիք յանձնախումբը կը հսկէ գոյքերու ճշգրիտ գործածութեան եւ դաշտերու, մարզասրահներու եւ լողաւազաններու ապահովութեան պայմաններուն:

5. Թեքնիք յանձնախումբը մօտեն կը հետեւի մրցաշարքի մը օրէնքներուն անշեղ գործադրութեան:
6. Թեքնիք յանձնախումբը կը քննէ մրցաշարքին մասնակցող խումբի մը յղած բողոքը եւ պէտք եղած պարագային կու տայ համապատասխան որոշում՝ Կազմակերպիչ Յանձնախումբին գիտակցութեամբ:
7. Թեքնիք յանձնախումբը նախքան իր որոշումին յանգիլը, կը տեղեկանայ գլխաւոր իրաւարարի եւ ի հարկէ Կազմակերպիչ Յանձնախումբի ներկայացուցիչին բացատրութիւնները:
8. Եթէ նոյն հարցով բողոքը կրկնուի կամ հարցին լուծում մը չգտնուի, կարելի է դիմել Դատական Յանձնախումբին: Թեքնիք յանձնախումբին որոշումը միայն դատական կազմն է, որ կրնայ բեկանել:
9. Մրցումի մը գծով բողոք կրնայ ներկայացնել միայն խումբին լիազօր պատասխանատուն կամ մարզիչը՝ պաշտօնական բողոքագիրի միջոցով եւ մրցումի աւարտէն առաւելագոյնը մինչեւ երեք ժամ ետք:  
Որեւէ բողոքագիր գրաւոր կը փոխանցուի տուեալ մարզածեւի թեքնիք յանձնախումբին, որ զայն կը քննէ Կազմակերպիչ Յանձնախումբին հետ:
10. Որեւէ մրցումի բողոքին քննութեան որոշումը կը տրուի **նոյն օրը**, նկատի ունենալով որ արդիւնքի որեւէ փոփոխութիւն կրնայ ազդել յաջորդ օրուան խաղերու յայտագիրին եւ արդիւնքներուն վրայ:
11. Խումբ մը երբ խաղի մը աւարտէն առաջ կը լքէ դաշտը, կը յայտարարուի պարտուած եւ կը կախակայուի մրցաշարքէն: Ոչ մէկ մարզիչ կամ պատասխանատու իր խումբը դաշտէն քաշելու իրաւունք ունի:  
**Ճանօթ՝** Խումբը դաշտ չներկայանալու պարագային, խումբը պարտուած կը նկատուի եւ կը կորսնցնէ համապատասխան կէտեր (**տեսնել խաղերու թեքնիք օրէնքները**):



# Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական ..... մարզախաղեր



## Մրցումի բողոքագիր

- Շրջան .....
- Մարզածել .....
- Տղայ  Աղջիկ  Մեծ  Կրտսեր
- Մրցումի վայր/դաշտ .....
- Մրցումի թիվ .....
- Դաշտի պատասխանատուի անուն .....
- Ստորագրություն .....
- Մասնակցող շրջանի պատասխանատուի անուն .....
- Ստորագրություն .....
- Մասնակցող խումբի պատասխանատուի /մարզիչի անուն .....
- Ստորագրություն .....
- Թուական .....
- Բողոքագիր
- .....
- .....
- .....
- .....
- .....
- .....
- .....
- .....
- .....
- .....



## **Դ. ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ**

1. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերուն Կեդրոնական Վարչութիւնը կը նշանակէ մարզական մասնագետներէ բաղկացած երեք հոգինոց Դատական Յանձնախումբ մը:
2. Մարզախաղերու Կազմակերպիչ Յանձնախումբէն ներկայացուցիչ մը ի պաշտօնէ ներկայ կ'ըլլայ նիստերուն՝ ներկայացնելու համար Յանձնախումբին զեկուցագիրը եւ ի հարկին յաւելեալ տեղեկութիւններ փոխանցելու համար:
3. Իրաւասութիւններ՝
  - ✓ Դատական կազմը կը քննէ միայն այն նիւթերը, որոնք իրեն փոխանցուած են Կազմակերպիչ Յանձնախումբին կողմէ եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին գիտակցութեամբ:
  - ✓ Դատական կազմը իր որոշումը կը փոխանցէ Կազմակերպիչ Յանձնախումբին :
4. Պարտականութիւններ՝
  - ✓ Դատական կազմը կը քննէ մարզական այն հարցերը եւ արդիւնքները, որոնց գծով գրաւոր բողոք ներկայացուած է թեքնիք յանձնախումբին եւ Կազմակերպիչ Յանձնախումբը յաւելեալ մասնագիտական կարծիք-որոշումի կարիքը կը զգայ:
  - ✓ Դատական կազմին որոշումը վերջնական է: Ան իր որոշումը գրաւոր կը ներկայացնէ Կազմակերպիչ Յանձնախումբի ժողովին, որուն ներկայ կը գտնուի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:
5. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերու իւրաքանչիւր պատուիրակութեան անդամ, մարզիկ կամ մարզիչ պատասխանատու է իր կատարած բոլոր վնասներուն եւ ծախսերուն՝ դաշտերէն, մարզասրահներէն, լողաւազաններէն եւ պանդոկներէն ներս թէ դուրս կամ որեւէ այլ տեղ:
6. Որեւէ խախտումի պարագային Կազմակերպիչ Յանձնախումբը կը դիմէ միութենական կարգապահութեան եւ համապատասխան պատիժներուն:
7. Պատիժ կրնայ սահմանուիլ մարզախաղերու մասնակցող խումբին, պատասխանատուին կամ մարզիչին, կատարուած յանցանքին համապատասխան զօրութեամբ: Դիտողութիւն կը տրուի նաեւ մասնակից Շրջանին, ըստ անհրաժեշտութեան:

8. Պատիժներ կը սահմանուին մրցաշարքին մասնակցող այն մարզիկներուն, որոնք մրցումներու ընթացքին ընդունուած օրէնքները չեն յարգեր, կը խանգարեն մրցումը կամ անվայել կեցուածք կ'ունենան:
9. Պատիժները կրնան ըլլալ, ըստ գործուած յանցանքին.-
  - ա. Որոշ ժամանակով կախակայում մրցումի ընթացքէն:
  - բ. Մէկ կամ երկու մրցումէ կախակայում:
  - գ. Բոլոր մրցումներէ կախակայում:
10. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցաշարքի մը ընթացքին գործուող միութենական բնոյթ ունեցող անկարգութեան պատիժը կ'որոշուի յանցաւոր մարզիկին պատկանած շրջանին վարչութեան կողմէ, ղեկավարող յանձնախումբին առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան գիտութեամբ:
11. Մրցաշարքը ղեկավարող թեքնիք յանձնախումբը իրաւասութիւն ունի կողմնակալութեամբ խաղ ղեկավարող իրաւարար մը կախակայելու մրցաշարքէն:
12. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու ընթացքին շրջանի մը պատասխանատուին կամ մարզիչին կողմէ գործուած անպատասխանատու արարք մը համապատասխան պատիժի կ'արժանանայ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

### **Ե. ՆԻԻԹԱԿԱՆ**

1. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մասնակցող շրջանները կը հոգան իրենց ճանապարհի, կեցութեան, ներքին փոխադրութեան եւ այլ տեսակի ծախսերը:
2. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու եւ այդ առիթով այլ բնոյթի ձեռնարկներէ գոյացած հասոյթը կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան:
3. Գոյացած նիւթական բացը կը ստանձնէ Կեդրոնական Վարչութիւնը:
4. Վերոյիշեալ մրցաշարքերուն մասնակցող մարզիկները եւ պատասխանատուները ազատ մուտքի իրաւունք ունին խաղավայրերը, Կազմակերպիչ Յանձնախումբին յարմար տեսած կարգադրութեան համաձայն:

## **2. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ**

1. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերու վերաբերող ընդհանուր տեղեկությունները Կեդրոնական Վարչությունը շրջաբերականով մը բոլոր շրջաններուն կը փոխանցէ մարզախաղերու թուականէն **տարի մը առաջ**:
2. Կազմակերպիչ յանձնախումբը Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերուն յայտագիրը եւ այլ անհրաժեշտ մանրամասնություններ Կեդրոնական Վարչության կը փոխանցէ մրցաշարքի թուականէն **վեց ամիս առաջ**: Կեդրոնական Վարչությունը կրնայ բարեփոխություններ կատարել ներկայացուած թղթածրարին մէջ:
3. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերու աւարտին, Կազմակերպիչ Յանձնախումբը **մինչեւ երեք ամիս** պէտք է նիւթաբարոյական յատուկ տեղեկագիր ներկայացնէ Կեդրոնական Վարչության:
4. Տեղական բոլոր տեսակի թղթակցություններու կամ այլ պաշտօնաթուղթերու համար կը գործածուի կազմակերպիչ տեղական Շրջանի վարչության կնիքը:
5. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերը պէտք է նկարահանել եւ լուսանկարել ու անոնցմէ օրինակներ յանձնել Կեդրոնական Վարչության, Հ.Ս.Ը.Ս.ի արխիւներուն եւ «Մարզիկ» պաշտօնաթերթին:
6. Պէտք է օգտագործել արդիական հաղորդակցության միջոցներն ու ընկերային ցանցերը (Facebook, Twitter, Instagram, միութեան կայքէջ եւ այլն) ձեռնարկներու քարոզչական աշխատանքին համար, ներքին եւ արտաքին իմաստով:

## **Է. ՄՐՑԱՆԱԿՆԵՐ**

1. Համա-Հ.Ս.Ը.Ս.ական մարզախաղերու աւարտին կը տրուին մրցանակներ, յուշանուէրներ եւ մասնակցության հաստատագիրներ:
2. Մրցանակները կ'ըլլան մետալներ եւ բաժակներ:
3. Կազմակերպիչ յանձնախումբը մրցումներէն առաջ շրջաններուն կը փոխանցէ մրցանակներուն մանրամասնությունները:
4. Մրցումներու առաջին երեք դիրքերը գրաւողները կը ստանան բաժակներ եւ մետալներ:
5. Լաւագոյն (MVP) մարզիկները եւ մարզիչները կը ստանան յուշանուէրներ (մրցումներէն առաջ Շրջաններուն կը փոխանցուին մանրամասնությունները):

6. Ոչ-մարզական արդիւնքներու կապուած մրցանակներ կը տրուին մէկ կամ անէլի պատուիրակութեան.-

✚ «Տիպար պատուիրակութիւն» (տարագ, ճշդապահութիւն, կարգապահութիւն...)

✚ «Մարզական ոգի» (մրցումներու ընթացքին միութենական ոգիի ցուցաբերում, յարգալիր վերաբերմունք,...)

### **Թ. Զ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ**

Յ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կը դաւանի «Առողջ միտքը, առողջ մարմնի մէջ» մարզական միջազգային կարգախօսը, միաժամանակ ան ոչ-Յ.Մ.Ը.Մ.ական մարզիկէն կը զատորոշուի իր ազգային յատուկ նկարագիրով եւ Հայաստանին ու հայրենիքին հանդէպ իր նուիրական պարտաւորութեամբ:

Արդ, Յ.Մ.Ը.Մ.ական մարզիկը՝

1. Հաւատարիմ է Յ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին: Ան պատրաստ է անսակարկ եւ հաւատարիմ կերպով ծառայելու ազգին ու հայրենիքին:
2. Յ.Մ.Ը.Մ.ական մարզիկը մաքուր է նկարագիրով, մտքով եւ բարոյականով:
3. Դաշտերէն ներս թէ դուրս, կարգապահ ու քաղաքավար է, միջազգային «Ֆէր փլէյ»ին տիպարն է:
4. Ան զուսպ է իր արտայայտութիւններուն կամ շարժումներուն մէջ եւ նախանձախնդիր է իր պատկանած միութեան բարոյականին:
5. Ան կը յարգէ իր պատասխանատուն կամ մարզիչը, կ'ենթարկուի անոր բոլոր ցուցմունքներուն՝ առանց այլեւայլի:
6. Մրցումներուն կը մասնակցի յաղթելու վճռակամութեամբ: Ան երբեք տկարութիւն չի ճանչնար:
7. Ան կը հաւատայ, որ մաս կը կազմէ հաւաքականութեան մը, մեծ ընտանիքի մը, որ իր կարգին կը հաւատայ հաւաքական աշխատանքի եւ համագործակցութեան սկզբունքին:
8. Յաղթանակներն ու պարտութիւնները կ'ընդունի մարզական նոյն ոգիով, վեհանձնութեամբ եւ համեստութեամբ:
9. Յ.Մ.Ը.Մ.ական մարզիկին ֆիզիքականը որքան կը պատկանի իրեն՝ նոյնքան կը պատկանի միութեան: Ան կը գուրգուրայ իր ֆիզիքական առողջութեան եւ մաքրութեան՝ հեռու քանդիչ մոլութիւններէ:

10. Ան կը հաւատայ Հայաստանին եւ Հայ Դատին ու միշտ պարտաստ է գինուորագրուելու եւ ծառայելու հայրենիքին եւ հայ ժողովուրդին:

### **Ժ. ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ**

*(Մարզիկներ, Մարզիչներ)*

#### **Ա. Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ** **ՈՒ ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

1. Կը գիտակցիմ, որ անձեւ ակելի միութիւնս կը ներկայացնեմ եւ հաւատարիմ եմ Հ.Ս.Ը.Ս.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:
2. Կը յարգեմ մրցումներու եւ փորձերու օրէնքներն ու կանոնները:
3. Կը յարգեմ իրաւարարներու բոլոր որոշումները:
4. Կը յարգեմ մարզիկները, մարզիչները, պատասխանատուները, իրաւարարները, մրցակից խումբը, ծնողներն ու հանդիսատեսները:
5. Կ'ընդունիմ յաղթանակը համեստութեամբ՝ առանց վարկաբեկելու մրցակիցը:
6. Կ'ընդունիմ պարտութիւնը՝ բարելաման հեռանկարով, գիտակցելով եւ ընդունելով մրցակից մարզիկներու կարողութիւնը:
7. Կ'ընդունիմ, որ իմ խաղընկերներս ալ կրնան սխալներ գործել եւ պատրաստ եմ իրենց օգնելու:
8. Կը պայքարիմ բարոյապէս խարդախութեան եւ անընդունելի արարքներու դէմ:
9. Կ'ընդունիմ, որ մրցակիցներս թշնամիներ չեն:
10. Կը ձեռնուիմ մարզիկներուն եւ իրաւարարներուն հետ, խաղերէն առաջ եւ վերջ:
11. Կ'ընդունիմ, որ մրցումներու եւ փորձերու ընթացքին մարզիչին տուած որոշումները կը նպաստեն խումբին ընդհանուր շահերուն:
12. Կը պահեմ տիպար կեցուածքս, դաշտերէն ներս թէ դուրս, եւ մրցումի ամբողջ տեսողութեան՝ ինչ ալ ըլլայ արդիւնքը:
13. Կը խօսիմ հայերէն, կը գործածեմ մաքուր լեզու բոլորին հետ եւ կը ներկայանամ պատշաճ տարագով:
14. Խնամքով կը գործածեմ մարզասրահներու եւ դաշտերու գոյքերը:
15. Կը գիտակցիմ, որ լաւագոյնս ընելը եւ բոլոր ճիգերս ի գործ դնելը ակելի կարեւոր են՝ քան մետալի արժանանալը:

Բ.      Զ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ՄԱՐԶԻՉԻՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻՆ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Կը փոխանցեմ մարզիկներու Զ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրիի նպատակներու իրագործման պարտաւորութիւնը:
2. Կը գիտակցիմ, որ անձեւ աւելի միութիւնս կը ներկայացնեմ եւ հաւատարիմ եմ Զ.Ս.Ը.Ս.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:
3. Կը գիտակցիմ, որ մեծ ազդեցութիւն կրնամ ունենալ ինծի վստահուած մարզիկներու դաստիարակութեան մէջ:
4. Կը գիտակցիմ, որ մարզախաղը միայն միջոց է եւ նախապատուութիւնը պետք է տրուի մարզիկի բարոյականը բարելաւելու, միութեան, ազգին ու հայրենիքին ծառայելու առաջադրանքով:
5. Կը յարգեմ մրցումներու օրէնքներն ու կանոնները:
6. Կը յարգեմ իրաւարարներու բոլոր որոշումները:
7. Կը յարգեմ մարզիկները, մարզիչները, պատասխանատուները, իրաւարարները, մրցակից խումբը, ծնողներն ու հանդիսատեսները:
8. Կ'ընդունիմ յաղթանակը համեստութեամբ՝ առանց վարկաբեկելու մրցակիցը: Իսկ պարտութեան պարագային կը գիտակցիմ եւ կ'ընդունիմ հակառակորդին կարողութիւնը:
9. Կ'ընդունիմ, որ մրցակիցներս թշնամիներ չեն:
10. Կը ձեռնուիմ մարզիչին, պատասխանատուին եւ իրաւարարներուն հետ, խաղերէն առաջ եւ վերջ:
11. Կը գործածեմ մաքուր լեզու բոլորին հետ եւ կը ներկայանամ պատշաճ տարազով: Կը պահեմ տիպար կեցուածքս, դաշտերէն ներս թէ դուրս, եւ մրցումի ամբողջ տեւողութեան ինչ ալ ըլլայ արդիւնքը:
12. Կ'ընդունիմ որ խստապահանջ եմ, բայց արդար՝ մարզիկներու հանդէպ, ինչ ալ ըլլայ իւրաքանչիւրին կարողութիւնը: Բոլորը անխտիր հոգածութեանս ենթակայ են:
13. Կ'ընդունիմ, որ յաղթանակ ապահովելու համար պետք է բացարձակապէս խուսափիլ անարդար, ապօրինի եւ խարդախ միջոցներէ:
14. Կը գործակցիմ մօտէն ծնողներուն հետ եւ կը բաժնեկցիմ փորձառութիւնս ու գիտելիքներս, միւս մարզիչներուն եւ պատասխանատուներուն հետ: